Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-421-12.12.2019,10.02.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սոցիալական աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «եւ տարածքային կառավարման պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում» բառերը փոխարինել «ստորաբաժանումներ» բառով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասից հանել «եւ տեղական ինքնակառավարման մարմինը», «եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերով» եւ «կամ համայնքային ծառայության» բառերը, իսկ «են» բառերը փոխարինել «է» բառերով:

Հոդված 3. Օրենքի ամբողջ տեքստից հանել «լիազորած պետական մարմնում չընդգրկված եւ կառավարման ոլորտից դուրս գործող» բառերը:

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) ինտեգրված սոցիալական ծառայությունների պետական գրասենյակի տարածքային մարմինների միջոցով կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը եւ համալիր կենտրոններում մեկ պատուհանի սկզբունքով դիմումների ընդունումը, հաշվառումը եւ միասնական փաստաթղթաշրջանառությունը.»:

Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 13-րդ, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերը եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասը:

Հոդված 6. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ համայնքային» բառերը:

Հոդված 7. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերը համապատասխանեցվում են սույն օրենքի պահանջներին սույն օրենքն ընդունվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Երկրորդ ընթերցում

Կ-421-12.12.2019,10.02.2020-ԱՍ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սոցիալական աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ~~«եւ գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմնի ստորաբաժանումներ, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում»~~ «եւ տարածքային կառավարման պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում» բառերը փոխարինել «ստորաբաժանումներ» բառով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասից հանել «եւ տեղական ինքնակառավարման մարմինը», «եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերով» եւ «կամ համայնքային ծառայության» բառերը, իսկ «են» բառերը փոխարինել «է» բառերով:

Հոդված 3. Օրենքի ամբողջ տեքստից հանել ~~«լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված եւ կառավարման ոլորտից դուրս գործող»~~ «լիազորած պետական մարմնում չընդգրկված եւ կառավարման ոլորտից դուրս գործող» բառերը:

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) ինտեգրված սոցիալական ծառայությունների պետական գրասենյակի տարածքային մարմինների միջոցով կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը եւ համալիր կենտրոններում մեկ պատուհանի սկզբունքով դիմումների ընդունումը, հաշվառումը եւ միասնական փաստաթղթաշրջանառությունը.»:

Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 13-րդ, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերը եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասը:

Հոդված 6. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ համայնքային» բառերը:

Հոդված 7. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերը համապատասխանեցվում են սույն օրենքի պահանջներին սույն օրենքն ընդունվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ(Կ-421-12.12.2019-ԱՍ-011/0), «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ(Կ-421[1] -12.12.2019-ԱՍ-011/0), «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ(Կ-421[2] -12.12.2019-ԱՍ-011/0) ԵՎ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-421[3] -12.12.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀՀ կառավարություն	«Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Կ-421-12.12.2019-ԱՍ-011/0),	Նախագծի 1-ին հոդվածում «եւ գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմնի ստորաբաժանումներ, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում» բառերը փոխարինել «եւ տարածքային կառավարման պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Կ-421-12.12.2019-ԱՍ-011/0),	Նախագծի 3-րդ հոդվածում «լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված եւ կառավարման ոլորտից դուրս գործող» բառերը փոխարինել «լիազորած պետական մարմնում չընդգրկված եւ կառավարման ոլորտից դուրս գործող» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Կ-421-12.12.2019-ԱՍ-011/0),	Առաջարկվում է «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հստակեցնելով **սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի լիազորությունները՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների մասով**: Առաջարկվում է հետևյալ խմբագրությունը՝ «4) ինտեգրված սոցիալական ծառայությունների պետական գրասենյակի տարածքային մարմինների	Նախագիծը լրացվել է նոր՝ 4-րդ հոդվածով:	Ընդունվել է:

		միջոցով կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը և համալիր կենտրոններում մեկ պատուհանի սկզբունքով դիմումների ընդունումը, հաշվառումը և միասնական փաստաթղթաշրջանառությունը.»:		
ՀՀ կառավարություն	«ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-421[3] -12.12.2019-ԱՍ-011/0)	Նախագծի 1-ին հոդվածում «աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող» բառերը փոխարինել «պետական մարմնում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: